«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՎԻԹ ԽԵՋՈՒՄՅԱՆ

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1983 թ. հունիսյան պլենումը, ի շարս այլ հարցերի, առաջնակարգ նշանակություն տվեց գաղափարական աշխատանքի, այդ թվում նաև բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի խնդիրներին. «Չխորշելով կեղծիքից ու զրպարտությունից,— ասված է պլենումի որոշման մեջ,— բուրժուական պրոպագանդան ձգտում է վարկաբեկել սոցիալիստական կարգերը, խարխլել մեր հասարակության սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնությունը։ Ուստի, այսօր առանձնահատուկ կարևորություն են ստանում աշխատավորների դասակարգային կոփումը, բուրժուական գաղափարախոսության դեմ անզիջում պայքարը»[1]։

Հունիսյան պլենումի լույսի տակ ակտուալ նշանակություն է ստանում նաև Ռուսաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարախոսության ու քաղաքականության քննադատությունը։ Դա նմանապես վերաբերում է ազգային շրջաններում գործած կուսակցություններին։ Ինչպես նշում է ոչ պրոլետարական կուսակցությունների պատմության նշանավոր հետազոտող Կ. Գուսևը, «սովետական պատմական գիտությունը վերջին տասնամյակներում նշանակալից քայլ է կատարել Ռուսաստանի բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների գործունեության լուսաբանման, նրանց կրախի պատճառների բացահայտման ուղղությամբ»[2]։ Սակայն, չնայած պրոբլեմի կարևորությանը, ինչպես իրավացիորեն ընդգծում են Ի. Մինցը, Կ. Գուսևը և Լ. Սպիրինը, ազգային շրջանների ոչ պրոլետարական կուսակցությունների պատմության ուսումնասիրությունը գտնվում է անբավարար վիճակում[3]։ Հայկական ոչ պրոլետարական կուսակցությունների պատմության ուսումնասիրության վերաբերյալ համանման կարծիք են հայտնում նաև սովետահայ որոշ պատմաբաններ[4]։ Եթե հայկական ոչ պրոլետարական կուսակցությունների պատմությունը սովետահայ պատմաբանների կողմից այս կամ այն չափով լուսաբանված է, ապա նույնը չի կարելի ասել հայ լիբերալ բուրժուազիայի «Հայ ժողովրդական կուսակցության» (այսուհետև ՀԺԿ) մասին, որը դուրս է մնացել նրանց տեսադաշտից։

Ստ. Շահումյանը նշել է, որ «մեր ազգային կուսակցությունները կազմվել են գլխավորապես կովկասյան մտավորականությունից, որը թե՛ իր ծագումով, թե՛ կրթությամբ և թե՛ իր տնտեսական շահերով սերտորեն կապված է եղել և

---

1 *«ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը, 14—15 հունիսի 1983 թ.», Երևան, 1983, էջ 77։*

2 К. В. Гусев, Состояние разработки и задачи дальнейшего изучения истории непролетарских партий России («Непролетарские партии России в 1917 году и в годы гражданской войны», М., 1980, с. 14).

3 *Նույն տեղում, էջ 3—39։*

4 Л. А. Хуршудян, К. С. Худавердян, Армянские политические партии. Некоторые вопросы истории и идеологии. («Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», М., 1980, с. 97); их же, Крах политики и идеологии армянских политических партий в 1917—1921 гг. («Буржуазные и мелкобуржуазные партии России в Октябрьской революции и гражданской войне», М., 1980, с. 131). *Շ. Ռ. Հարությունյան, Պատմագրության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1967, էջ 434։*

այսօր էլ կապված է կովկասահայ բուրժուազիայի հետ»[5]։ Դա լիովին վերաբերում է նաև ՀԺԿ-ին։ Ժողովրդականներն իրենք ևս հաստատում են, որ ՀԺԿ-ն հայ մտավորականության կուսակցություն է, որը շարունակելու է հայ ազգային ռամկավար հոսանքի գործը[6]։

ՀԺԿ-ն հիմնադրվել է 1917 թ. ապրիլի 11-ին, Թիֆլիսում։ Այդ կուսակցության գաղափարական նախորդները «Մշակ» թերթի շուրջը համախմբված լիբերալ մտավորականներն էին, որոնք ակտիվորեն մասնակցեցին նաև նրա հիմնադրմանը։ Պատահական չէ, որ նորաստեղծ կուսակցության անդամներն իրենց համարում էին մշակականներ և իրենց կուսակցության նախապատմությունն էլ հասցնում էին մինչև XIX դ. 70—80-ական թվականները։ «Ճիշտ չէ այն համոզումն,— գրում է ՀԺԿ-ի փոխնախագահ Ս. Հարությունյանը,— որ մենք նոր կուսակցություն ենք. մեր կրեդոն է ուշ մշակվել, այն է՝ 1917 թ., իսկ մեր գաղափարները վաղուց է, որ գոյություն ունեն հայ ժողովրդի մեջ»[7]։ Սահմանադիր ռամկավարական տիպի հայկական կուսակցություն ստեղծելու պահանջը, ինչպես տեսնում ենք, առաջ է քաշվել XIX դ. վերջերին։ 1905 թ. մշակական ուղղության գործիչները կովկասյան բարձրագույն իշխանությանը ներկայացրել էին նոր կուսակցության ստեղծման ծրագիր, սակայն այն մերժվել էր։

1905 թ. հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստից հետո կազմակերպվեց սահմանադիր դեմոկրատական (կադետական) կամ ժողովրդական ազատության կուսակցությունը (ԺԱԿ)։ Իր ծրագրային փաստաթղթերում նա պահանջում էր իրականացնել հասարակության դեմոկրատական (բուրժուական իմաստով) վերափոխման կոնկրետ միջոցառումներ։ Դա էր պատճառը, որ Ռուսաստանի փոքր ազգերի որոշ ներկայացուցիչներ մտան այդ կուսակցության մեջ, այդ թվում հայերից՝ Մ. Աջեմյանը, Ա. Ջեվիլիգովը, Գ. Թումանովը և ուրիշներ։ Կողմնակից լինելով Ռուսաստանի միասնությանն ու անբաժանելիությանը, կադետական կուսակցությունը փոքր ազգություններին ընդհանուր քաղաքական ազատությունների հետ միասին խոստանում էր ազգային կուլտուրական ինքնավարություն։ Քանի որ կադետական կուսակցությունը երկրորդական նշանակություն էր տալիս հայերի ազգային հարցին, այդ կուսակցության հայ անդամները, ինչպես նաև «Մշակ» թերթի շուրջը համախմբված բուրժուական մտավորականությունը (ընդունելով հանդերձ կադետների ծրագիրը) ձգտում էին ստեղծել ազգային պահանջները բավարարող անկախ, ինքնուրույն կուսակցություն։

Այդ ուղղությամբ գործնական քայլեր արվեցին։ 1906 թ. կազմվեց ծրագիր. «Մշակն» այդ ուղղությամբ աշխատեց, սակայն սկսված ռեակցիան վերջ տվեց այդ փորձերին։ 1917 թ. սկզբներին մշակականները նոր աշխատանք տարան այդ ուղղությամբ։ «Անհետաձգելի պահանջն այն է,— գրում էր «Մշակը»,— որ անմիջապես կազմակերպվի հայկական նոր կուսակցություն... Եթե դեռ հին ռեժիմի օրոք անհրաժեշտ էր նկատվում այդ նոր կուսակցությունը, այժմ, երբ նոր և լուսավոր իրավակարգի սահմանմամբ մեծ ապագա և հորիզոններ են բացվում Ռուսաստանի ժողովուրդների առաջ, հայ ազգի առաջադիմական և էվոլյուցիոնիստական զարգացման կողմնակից խավերը ևս պետք ունեն այդպիսի մի կազմակերպության»[8]։ «Մշակն» իր էջերում պրոպագանդում էր հայ «ժողովրդական» քաղաքական կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը, որը պիտի հիմնված լիներ «դեմոկրատական» սկզբունքների վրա, միևնույն ժամանակ լիներ խորապես ազգային և, ինչպես «Մշակն» էր գրում, չընդգրկեր այն արկածախնդրական քաղաքականությունը, որը ընդունել էին հայ մյուս ազգային կուսակցությունները[9]։ Ըստ մշակականների՝

5 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 408։

6 «Ժողովուրդ», 17. IX. 1919։

7 Նույն տեղում, 13. IX. 1917։

8 «Մշակ», 7. III. 1917։

9 Նույն տեղում, 1. I. 1917։

այդ նոր ստեղծվող կուսակցությունը պետք է փրկեր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, պայմաններ ստեղծեր ազգային պետականության և հայ կուլտուրայի զարգացման համար, կարգավորեր փոխհարաբերությունները հարևան ազգերի հետ[10]։ Խոսելով նոր կուսակցության ստեղծման անհրաժեշտության մասին, մշակականները մատնանշում էին համազգային քաղաքական խնդիրները, որոնք այդ ժամանակաշրջանում մեծ սրություն էին հասել։ Ինչպես և պետք էր սպասել, նրանք «մոռացության» էին տալիս սոցիալ-դասակարգային և տնտեսական գործոնները՝ ձգտելով թաքցնել կուսակցության դասակարգային բնույթը։

Բարոզելով նոր կուսակցության անհրաժեշտությունը, «Մշակը» գրում էր «Թող մեր գավառական դեմոկրատական ուժերը, որոնք չեն պատկանում հայկական հեղափոխական կուսակցություններին և ունեն ընդհանրապես սահմանադիր-ռամկավար և հանրապետական կամ ժողովրդական ուղղություն, համախմբվեն գավառներում, կազմեն ճյուղեր»[11]։

Փետրվարյան հեղափոխությունից հետո հասարակական կյանքի դեմոկրատացումը ակտիվացրեց քաղաքական միտքը, նոր պայմաններ ստեղծվեցին կուսակցության ստեղծման համար։ «Մշակը» և նրա խմբագիր Հ. Առաքելյանը նախաձեռնեցին հրավիրել խորհրդակցական մի ժողով, որը պիտի քննարկեր ազգային կուսակցության ստեղծման հարցը։ Այն գումարվեց 1917 թ. մարտի 16-ին՝ Թիֆլիսում։ Ժողովն ընտրեց ժամանակավոր մի մարմին, որը պետք է մշակեր նոր կազմակերպվող կուսակցության ծրագրի նախագիծը և հրավիրեր հիմնադիր համագումար։ Այդ նպատակով նույն թվականի ապրիլի 11-ին Թիֆլիսում գումարվեց հիմնադիր ժողով, որը քննարկեց ծրագրի նախագիծը և հիմք դրեց կուսակցությանը։ Ընտրվեց կուսակցության ժամանակավոր կենտրոնական վարչություն (ԺԿՎ) և նախագահություն։ Կուսակցության ԺԿՎ նախագահ ընտրվեց Լ.Ղուլյանը, փոխնախագահներ՝ Հ. Առաքելյանը, Կ. Ստեփանյանը, Հ. Փիրալյանը[12]։

Ապրիլյան ժողովը նորընտիր ԺԿՎ-ին հանձնարարում է մշակել կուսակցության կանոնադրությունը, ստեղծել սեփական օրգան, կազմակերպել պրոպագանդա, գավառներում բացել կուսակցության ճյուղեր և ողջույնի հեռագիր ուղարկել ժամանակավոր կառավարությանն ու Անդրկովկասյան հատուկ կոմիտեին[13]։

ԺԿՎ-ն որոշում է կուսակցությունը կոչել «Հայ ժողովրդական կուսակցություն», որն ընդհանուր պետական հարցերում հարելու էր կադետական կուսակցության վերջին բարեփոխված ծրագրին և գործելու էր նրա հետ համեբաշխ[14]։ Այն ազգային և եկեղեցական հարցերում ունենալու էր առանձին ծրագիր, ելակետ ունենալով դարձյալ նույն կադետական կուսակցության սկզբունքները։ Ազգային հարցի վերաբերյալ ընդունվում է հետևյալ բանաձևը. «Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց սահմանները պետք է փոխել ըստ ազգային համախմբումների, հայերը պետք է ստանան տերիտորիալ-ազգային ինքնավարություն օրենսդրական մարմնով՝ տեղական հարցերի վերաբերյալ»[15]։

Համաձայն ապրիլի 11-ի ժողովի, պետական հարցերի և քաղաքացիների իրավունքների վերաբերյալ ընդունվում է ԺԱԿ-ի ծրագիրը, որոշվում է ժամանակավորապես ղեկավարվել այդ ծրագրով, նրա վերջնական մշակումն ու հաստատումը թողնելով կուսակցության ընդհանուր համագումարին։ Նման իրավիճակում ՀԺԿ-ն դեռևս ինքնուրույն, անկախ կուսակցություն չէր։ Նա իր

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, 29. III. 1917։

12 Նույն տեղում, 6. VII. 1917։

13 Նույն տեղում, 13. IV. 1917։

14 «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», с. 101.

15 «Մշակ», 13. IV. 1917։

վրա կրում էր ԺԱԿ-ի ազդեցությունը և հանդես էր գալիս որպես այդ կուսակցության հայկական մասնաճյուղ։ Կուսակցության կազմակերպական կառուցվածքի հարցում չկար միասնական մոտեցում։ Կուսակցության մեջ նկատվում էր երկու ուղղություն[16]. առաջինը ՀԺԿ-ն դիտում էր որպես ԺԱԿ-ի մասնաճյուղ, որը, սակայն, ազատ էր լինելու ազգային ծրագրի մեջ. երկրորդը պահանջում էր անտեսել ԺԱԿ-ը, և ՀԺԿ-ն ճանաչել որպես բոլորովին անկախ ազգային կուսակցություն, որի ծրագիրը կազմելիս ելակետ պիտի վերցվեր միայն ազգային շահերը։ Այդ երկդիմությունը շարունակվեց մինչ ՀԺԿ-ի առաջին համագումարը, որը տեղի ունեցավ 1917 թ. սեպտեմբերի 24—28-ը։ Համագումարը գտավ, որ հայ իրականության մեջ հաջողություն կարող է ունենալ միայն ազգային կուսակցությունը՝ իր ազգային գաղափարով և կազմակերպական սիստեմով։ Ելնելով դրանից, համագումարը ծրագրի մեջ կատարեց մասնակի փոփոխություններ և ՀԺԿ-ն հայտարարեց անկախ, ինքնուրույն ազգային կուսակցություն։ ՀԺԿ-ն այլևս քաղաքական և կազմակերպչական ոչ մի կապ չուներ կադետական կուսակցության հետ, բացի գաղափարական ընդհանուր սկզբունքներից ու գործելակերպից։ Իր գաղափարախոսությամբ լինելով կադետական տիպի, այն, սակայն, շարունակում էր մնալ անկախ, ինքնուրույն հայկական ազգային կուսակցություն։ Համագումարն ընտրեց 23 անդամից բաղկացած մշտական Կենտրոնական կոմիտե և Կենտրոնական բյուրո։ Կենտրոնական բյուրոյի նախագահ ընտրվեց 4-րդ պետական դումայի և Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ Միքայել Բաբաջանյանը։ Փոխնախագահներ ընտրվեցին Հ. Առաքելյանը, Ի. Ամիրյանը և Կ. Ստեփանյանը[17]։

Համագումարը վերաքննելով ԺԿՎ-ի ծրագիրը, մասնակի փոփոխություններով ընդունում է նոր ծրագիր։ Պետական, հողային, բանվորական, քաղաքացիների իրավունքների հարցերում կրկին ընդունվում են ԺԱԿ-ի ծրագրի հիմնական սկզբունքները։ ՀԺԿ-ն կադետների ծրագիրը համապատասխան գրտավ իր աշխարհայեցողությանը, նշելով, որ այն իբր թե ապադասակարգային, էվոլյուցիոն կուսակցություն է[18], և ՀԺԿ-ն իրեն ևս դիտում էր իբրև այդպիսին[19]։

Նախկին ծրագրից հանվում է «կուսակցության անդամներ կարող են լինել միայն ռուսահպատակներ» կետը[20]։ Նոր ծրագրի մեջ համագումարն ավելացնում է «կուսակցության համազգային լինելու» և «օտարահպատակ հայերի կուսակցության անդամ դառնալու իրավունքի մասին» կետերը[21]։ Համաձայն վերափոխված ծրագրի, կուսակցությունն իր գործունեությունը տարածում էր ամեն տեղ, ուր կար հայություն, բայց ամենուր հարմարվելով տեղական պայմաններին։ Նոր ծրագիրը պահանջում էր Անդրկովկասի սահմանափոխում՝ ըստ ազգային համախմբումների, որից հետո Ռուսահայաստանը պետք է ստանար ազգային-տերիտորիալ ավտոնոմիա՝ տեղական հարցերի վերաբերյալ օրենսդրական մարմնով[22]։ Այս կետը միանգամայն հակասում էր կադետական ծրագրին, որովհետև նրանք դեմ էին Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող փոքր ազգերի ազգային տերիտորիալ ավտոնոմիային և խոստանում էին միայն ազգային կուլտուրական ինքնավարություն։ Նախկին ծրագրի մնացած կետերն ընդունվում են անփոփոխ։ Հողային ծրագիրը լրացվեց ըստ կադետական ծրագրի, բայց այն հայտարարվեց ժամանակավոր, մինչև որ առաջիկա համագումարը մշակեր նորը՝ նկատի ունենալով Անդրկովկասի հողային պայմանները։ Ինչ վերաբերում էր Հայաստանից դուրս գտնվող

16 Նույն տեղում, 24. X. 1917։

17 Նույն տեղում, 13. X. 1917։

18 Նույն տեղում, 25. VI. 1917։

19 «Ծրագիր ՀԺԿ», Թիֆլիս, 1917։

20 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 4033, ց. 5, գ. 310, թ. 6։

21 «Ծրագիր ՀԺԿ», Թիֆլիս, 1917։

22 Նույն տեղում։

հայերին, ապա ՀԺԿ-ն պահանջում էր հասարակական-իրավական միությունների իրավունքով ազգային կուլտուրական ավտոնոմիա՝ նույն իրավունքները վերապահելով հայկական ավտոնոմիայի սահմաններում ապրող փոքրամասնություն կազմող ազգերին[23]։

Արևմտահայ և եկեղեցական հարցերի վերաբերյալ համագումարը կարիք չզգաց փոփոխություն մտցնելու հին ծրագրի մեջ և վերահաստատեց այն։ Հայկական հարցը համարելով միջազգային հարց, ՀԺԿ-ն առաջ չքաշեց որոշակի պահանջներ։ Նա թողնում էր, որ այդ հարցը վճռվի ըստ արևմտահայերի ցանկության, իր կողմից խոստանալով միջազգային կոնգրեսում աջակցել նրա իրագործմանը։ Եկեղեցական հարցում ծրագիրը հասարակության յուրաքանչյուր անդամի համար պահանջում էր կրոնի և դավանության ազատություն. եկեղեցին անջատվում էր պետությունից[24], հայոց եկեղեցուն պատկանող կալվածքները համարվում էին համազգային սեփականություն։

Մասնակի փոփոխության էր ենթարկվում կրթական ծրագիրը։ Այդ փոփոխությունը վերաբերում էր տարբեր տիպի դպրոցների մեջ հաջորդականություն ու կապ ստեղծելուն։ Այն հնարավորություն էր տալիս, որ ամեն ազգ իրավունք ունենա իր մայրենի լեզվով կրթություն ստանալու բոլոր աստիճաններում[25]։

Քաղաքական պայմանների փոփոխության հետևանքով ՀԺԿ II համագումարն ընդունեց նոր ծրագիր։ Եթե նախորդ ծրագրում Ռուսահայաստանը և Արևմտահայաստանը ներկայացվում էին անջատ-անջատ, Ռուսահայաստանի համար նախատեսվում էր ազգային-տերիտորիալ ավտոնոմիա, արևմտահայ հարցը թողնվում էր նրանց ցանկությանը, ապա նոր ծրագիրն առաջ էր քաշում «միասնական և ամբողջական» հայկական պետության գաղափարն իր ծովային ելքով, որի մեջ պետք է մտնեին Արևելյան և Արևմտյան Հայաստանը, ինչպես նաև Կիլիկիան[26]։ Ինչպես տեսնում ենք, ՀԺԿ-ն ձգտում էր ստեղծել ծովային ելքով «միասնական» Հայաստան, որտեղ պետք է հաստատվեր բուրժուական պառլամենտական հանրապետություն, որի պետական պաշտոնական լեզուն պետք է համարվեր հայերենը[27]։ Հայաստանի սահմաններից դուրս գտնըվող հայերի համար ծրագիրը պահանջում էր ազգային կուլտուրական ավտոնոմիա՝ հասարակական-իրավական միությունների իրավունքով[28]։

Այսպիսով, ՀԺԿ-ի ծրագիրը, ըստ էության կրկնում էր ռուսական կադետների և նրանց եղբայրակից արևմտաեվրոպական բուրժուական մյուս կուսակցությունների ծրագրային դրույթները։ Այն պարունակում էր դեկլարատիվ բընույթի դեմոկրատական ազատությունների և իրավունքների տարրական որոշ սկզբունքներ, որոնք ժողովրդականները փորձում էին զուգակցել մասնավոր ձեռներեցության ազատության, մասնավոր սեփականատիրական հարաբերությունների հետ։ Վ. Ի. Լենինը տալով Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների բնութագիրը, նշում էր, որ «կուսակցությունների «ծրագրերը» ամենուրեք գրվում են բացառապես հասարակությանը խաբելու համար»[29]։ Վ. Ի. Լենինի այս խոսքերը լիովին վերաբերում են նաև ՀԺԿ-ի ծրագրին։ Այդ ծրագրի յուրաքանչյուր պարագրաֆի ծածկույթի տակից երևում էր նրա բուրժուական դասակարգային բնույթը։ Այն արտահայտում էր հայ լիբերալ բուրժուազիայի և բուրժուական մտավորականության քաղաքական ու տնտեսական շահերը[30]։

Արխիվային փաստաթղթերի, ամսագրերի ու թերթերի և այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀԺԿ-ն 1917—1921 թթ. իր գոյության

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 «Ծրագիր ՀԺԿ», Երևան, 1919։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

29 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկ., հ. 21, էջ 340։

30 «Ծրագիր ՀԺԿ», Երևան, 1919։

ընթացքում հիմնել է ճյուղեր, մասնաճյուղեր, քաղաքային և գյուղական տեղական կոմիտեներ ոչ միայն Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում, այլև Հյուսիսային Կովկասում, Իրանում և այլուր։ 1917 թ. ՀԺԿ I համագումարի հաշվետվության մեջ հիշատակվում է, որ հինգ ամսվա ընթացքում հիմնվել է կուսակցության 32 ճյուղ և 10 ենթաճյուղ[31], իսկ մինչև 1920 թ. վերջը՝ 50-ից ավելի ճյուղեր[32]։ Իր գոյության ընթացքում ՀԺԿ-ն հրատարակել է «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», ապա «Ժողովրդական թերթ», «Երկիր», «Նոր կյանք» թերթերը։ Կուսակցությանը կից գործում էին կանանց, ուսանողական, աշակերտական ֆրակցիաներ, որոնք հրատարակում էին իրենց «Քայլեր» և «Նոր ուղի» թերթերը։

Ինչպես տեսնում ենք, արևելահայ իրականության մեջ հանդես եկավ քաղաքական մի նոր կուսակցություն՝ «Հայ ժողովրդական կուսակցությունը», որը հավակնում էր տնօրինել հայ ժողովրդի բախտը։ Սակայն լինելով հայ լիբերալ բուրժուազիայի կուսակցություն, այն ո՛չ իր գաղափարախոսությամբ և ո՛չ էլ գործելակերպով չէր ուղում և չէր էլ կարող արտահայտել ժողովրդի իսկական շահերը։

«Հայ ժողովրդական կուսակցությունն» անտարբեր չգտնվեց սոցիալ-քաղաքական իրադարձությունների նկատմամբ։ Հենց սկզբից նա դավերգեց Փետրվարյան հեղափոխությունը, այն անվանելով «մեծ և անարյուն» հեղափոխություն, որն իբր բոլոր ազգերին ու դասակարգերին ազատություն էր բերելու բռնակալության ճնշիչ կապանքներից և նրանց տալու էր ինքնագործունեության լայն հնարավորություններ[33]։ Հայ լիբերալ բուրժուազիայի կուսակցությունն իր ծրագրով ձգտում էր հայ պրոլետարիատին և աշխատավորությանը հեռու պահել հեղափոխական պայքարից։ Վախենալով, որ դասակարգային պայքարի սրումը կարող է հասցնել իր դասակարգի համար անցանկալի հետևանքների, ՀԺԿ-ն ավարտված էր համարում հեղափոխությունը և աշխատում էր մասսաների ուշադրությունը շեղել դեպի սահմանադիր ժողովը[34]։ Դա երևում է հատկապես ժամանակավոր կառավարությանը նրա հղած դեկլարացիայից, որտեղ ասված է. «ՀԺԿ նպատակ է դնում լիակատար աջակցություն ցույց տալ ժամանակավոր կառավարությանը, իբրև պետական դումայից ընտրված ու ճանաչված միակ օրինավոր իշխանություն։ Նույն այդ նպատակով ՀԺԿ կարևոր է համարում, որ մինչև սահմանադիր ժողովի գումարումը չդրվեն այնպիսի ազգային, դասակարգային, կրոնական և տնտեսական պահանջներ, որոնք առաջ բերեն տարաձայնություններ և երկպառակություններ Ռուսաստանի զանազան ազգերի ու դասակարգերի մեջ... Բովանդակ Ռուսաստանի լոզունգը պետք է լինի պատերազմը մինչև հաղթական վախճանը»[35]։

Տարվելով սահմանադրական պատրանքներով և հավատարիմ իրենց բուրժուական էությանը, ժողովրդականները չէին պահանջում սոցիալ-քաղաքական և տնտեսական հարցերը ժողովրդի օգտին լուծել։ Նրանք ամեն կերպ աշխատում էին հեղափոխությունը պահել բուրժուական սահմանադրական շրջանակների մեջ, պահպանել և ամրապնդել կապիտալի իշխանությունը, ժխտել դասակարգային պայքարը։ «Դասակարգային կռիվը,— գրում էին ժողովրդականները,— թուլացնում է մեր ազգային ոգին ու ձգտումները»[36]։

Արտահայտելով հայ լիբերալ բուրժուազիայի տնտեսական և քաղաքական

---

31 «Մշակ», 26. IX. 1917։

32 «Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне», с. 102.

33 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 310, թ. 6։

34 Համառուսական սահմանադիր ժողովի Անդրկովկասյան տեղամասի ընտրություններին ՀԺԿ-ի օգտին քվեարկել էր ամբողջ ձայների միայն 1,6%-ը (1619 ձայն) և նրանց չհաջողվեց ոչ մի պատգամավոր անցկացնել սահմանադիր ժողով («Մշակ», 21. XI. 1917)։

35 «Մշակ», 7. IV. 1917։

36 Նույն տեղում, 8. XI. 1917։

ձգտումները, ՀԺԿ-ն ցանկանում էր վերացնել տնտեսության միջնադարյան ձևերն ու հարաբերությունները, զարկ տալ տնտեսության կազմակերպման կապիտալիստական եղանակին, լայն պայմաններ ստեղծել մասնավոր ձեռներեցության համար[37]։ Փետրվարյան հեղափոխությունն էլ դիտվում էր որպես այդ խնդիրների իրականացման միակ և վերջին միջոց։ Ուստի, հեղափոխության գլխավոր խնդիրն այդ կուսակցությունը համարում էր «նորմալ բուրժուական կառավարության» ստեղծումը։ Ուժեղ և ամուր իշխանությունը, նրա կարծիքով, կարող էր վերացնել ժողովրդական հեղափոխության վտանգը։ Այդ պատճառով էլ ՀԺԿ-ն հայտարարեց, որ հանուն բուրժուական հեղափոխության սկզբունքների ու պահանջների կաջակցի ժամանակավոր կառավարությանը։ ՀԺԿ-ն նման վերաբերմունք դրսևորեց նաև Անդրկովկասյան հատուկ կոմիտեի նկատմամբ, որպես ժամանակավոր կառավարության տեղական մարմնի[38]։

Ժողովրդականները կողմնակից էին իմպերիալիստական կործանարար պատերազմի շարունակմանը։ Նրանք համակրանքով վերաբերվեցին կադետական կուսակցության լիդեր Միլյուկովի՝ դաշնակիցներին հղած նոտային, որով նա ժամանակավոր կառավարության անունից պարտավորվում էր պատերազմը շարունակել մինչև հաղթական վախճան։ «Այն քաղաքականությունը,— գրում էին ժողովրդականները,— որին հետևում է Միլյուկովը, կատարելապես ազգային է. այն ամենաազատամիտ քաղաքականությունն է, որը մենք պետք է ողջունենք և պաշտպանենք»[39]։

Ձգտումներով ու գործելակերպով հավատարիմ մնալով իր բուրժուական բնույթին, ՀԺԿ-ն Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ բռնեց խիստ թշնամական դիրք և ամեն ինչ անում էր Հայաստանը հեղափոխության ազդեցությունից հեռու պահելու համար։ «Բոլորի վճռական ցանկությունն է,— գրում էր ՀԺԿ-ի նախագահ Մ. Բաբաջանյանը 1917 թ. նոյեմբերի 8-ին (21-ին),— որպեսզի այստեղ մուտք չունենա անարխիան, որ տիրում է այսօր Պետրոգրադում և Ռուսաստանի այլ քաղաքներում»[40]։ Հեղափոխության դեմ պայքարելու նպատակով ՀԺԿ-ի կենտրոնական օրգան «Ժողովուրդ» թերթի խմբագրականը հորդորում է մոռանալ բոլոր վեճերը, միաբանվել, «մի ընդհանուր ճակատ կազմել ծավալվող բոլշևիզմի դեմ կռվելու» համար։ «Եվ եթե մենք,— կարդում ենք խմբագրականում,— չկարողանանք օր առաջ մի ընդհանուր ճակատ ստեղծել... այդ դեպքում կորած ենք բոլորս միասին... ընդունենք իրողությունը և առանց հապաղելու գործի անցնենք»[41]։ ՀԺԿ կենտկոմը 1917 թ. հոկտեմբերի 27-ի արտակարգ նիստում որոշում է իր վերաբերմունքը Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ և գալիս «այն եզրակացության, որ ՀԺԿ վերաբերմունքը կարող է լինել միայն բացասական»[42]։ Հոկտեմբերյան հեղափոխության նկատմամբ նույնպիսի վերաբերմունք է դրսևորվում նաև նոյեմբերի 9-ին հրավիրված ժողովը, որտեղ ՀԺԿ-ի գաղափարախոս Իս. Ամիրյանն իր ելույթում նշում է. «Գալով բոլշևիկներին, նրանց հաջողությունը վնասակար է մեզ համար։ Մեր շահը, մեր ճանապարհը նրանց հետ չէ։ Շնորհիվ նրանց, ռուս ժողովուրդը այսօր հակապետական է, բայց նա գիտակցության կգա և կկանգնի պետականության գաղափարի վրա... Իսկ եթե Ռուսաստանը մնա լենինյանների իշխանության տակ, մեր և ռուս ժողովրդի հարաբերությունների վրա պիտի խաչ քաշել... Ուրեմն, մեր պլատֆոր-

37 «Մրագիր ՀԺԿ», Երևան, 1919։

38 ՀԺԿ նախագահ Մ. Բաբաջանյանը նշանակվել էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ, գրաքննելով հողագործության և ջրային աշխատանքների բաժինը (ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 300, թ. 69)։

39 «Մշակ», 1917, № 105։

40 Նույն տեղում, 8. XI. 1917։

41 «Ժողովուրդ», 29. III. 1919։

42 «Մշակ», 29. X. 1917։

ման է՝ մենք ազգային ենք և պետական... Եվ... բոլշևիկների հեղաշրջմանը նայում ենք միանգամայն բացասաբար»[43]։

Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ բռնած թշնամական դիրքին համապատասխան՝ ժողովրդականներն արդարացրին ու գովերգեցին իմպերիալիստական պետությունների ռազմական ինտերվենցիան և քաղաքացիական կռիվները Ռուսաստանում։ «Դեմ լինելով բոլշևիզմին որպես սոցիալական ու քաղաքական շարժման և կողմնակից ժողովուրդների ինքնորոշման իրավունքի,— գրում էին ժողովրդականները,— հայ ժողովուրդը ելակետ ունենալով իր սեփական շահերն, ամենայն համակրությամբ պիտի վերաբերվի մեր հարևանների պայքարին բոլշևիզմի դեմ»[44]։ *Ըստ այդմ՝ ժողովրդականները հույս էին փայփայում, թե օտարերկրյա իմպերիալիստներին կհաջողվի վերականգնել բուրժուական Ռուսաստանը։ «Կասկած չկա,— գրում էին նրանք,— որ շատ մոտիկ ապագայում կտոնվի Ռուսաստանի վերածնման ակտը և կգումարվի հիմնադիր ժողով»*[45]։

Անդրկովկասի բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները Սովետական Ռուսաստանի, ինչպես նաև երկրամասի հեղափոխական ուժերի դեմ պայքարելու նպատակով ստեղծեցին իրենց իշխանությունը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, որը երկար գոյություն չունեցավ։ Անդրկովկասի ազգայնական կուսակցությունները միմյանց քաղաքական ձգտումների նկատմամբ անվստահությամբ էին տրամադրված. սրվել էին ազգային հակասությունները և կուսակցական վեճերը։ Դա՝ ավելի խորացավ հատկապես սեյմի կառավարման ժամանակաշրջանում։ Սեյմը պաշտոնապես Անդրկովկասը հայտարարեց Ռուսաստանից անկախ, իսկ մի փոքր անց ցրվեց։ Անդրկովկասում ստեղծվեցին բուրժուական ազգային հանրապետություններ. 1918 թ. մայիսի 26-ին՝ Վրաստանը, 27-ին՝ Ադրբեջանը իրենց «անկախ» հայտարարեցին, մայիսի 28-ին Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդն իրեն հայտարարեց «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»[46]։ *Ժողովրդականները դեմ էին ինչպես Ռուսաստանից Անդրկովկասի անջատմանը, այնպես էլ ազգային հանրապետությունների ստեղծմանը։ «Ահռելի սխալ է,— գրում էին նրանք,— գոնե մեզ՝ հայերիս համար ընդունել Անդրկովկասի անկախությունը և նրա անջատումը Ռուսաստանից, ապա ավելի խոշոր սխալ էր Անդրկովկասը երեք մասերի բաժանելը»*[47]։ *ՀԺԿ-ն գտնում էր, որ Անդրկովկասը նման ծանր պայմաններում չպետք է անջատվեր, այլ սեյմն ու կառավարությունը պետք է ուղիներ գտնեին բոլոր կուսակցությունների համագործակցությունը ձեռք բերելու և ազգային կառավարության ամրապնդմանը նպաստելու համար։ Ներկայացնելով Անդրկովկասի անջատման և «անկախ» ազգային հանրապետությունների ստեղծման «դրական»*[48] *և բացասական*[49] *կողմերը, ժողովրդականները խոստովանում էին, որ այդ անջատումը չի կարող փրկել ո՛չ թուրքական լծից և ոչ էլ ընդհանուր տնտեսական քայքայումից։ Այդ պատճառով էլ նրանք կոչ էին անում՝ չգնալ սեպարատիզմի ուղիով, այլ «ցանկանալ, որ Ռուսաստանը (բուրժուական—Դ. Խ.) ուժեղ լինի», հետևաբար, «կռվել սեպարատիզմի՝ բոլշևիզմի դեմ, որոնք քայքայում են պետությունը»*[50]։

Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և ազգային «անկախ» հանրապետությունների ստեղծման քաղաքականությանը դեմ լինելը չէր նշանակում,

---

43 *Նույն տեղում, 9. XI. 1917։*

44 *«Ժողովուրդ», 8. IV. 1920։*

45 *«Մշակ», 1917, № 136։*

46 *ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 1ա, թ. 345։*

47 *«Մշակ», 29. VI. 1918։*

48 *Նույն տեղում, 13. IV. 1918։*

49 *ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 339, թ. 161։*

50 *«Մշակ», 3. X. 1917։*

թե ժողովրդականները ցանկանում էին կապված մնալ հեղափոխական Ռուսաստանին։ Սկզբնական շրջանում ունենալով ռուսական կողմնորոշում, նրանք ռուսահայոց հարցը կապում էին բուրժուական Ռուսաստանի ընդհանուր պետական հարցի հետ։ «Քննելով Ռուսաստանի ներկա քաղաքական դրությունը հայ ազգի շահերի տեսակետից,— ասված է 1917 թ. հոկտեմբերին հայոց ազգային խորհրդին ՀԺԿ-ի ներկայացրած բանաձևում,— գալիս ենք այն եզրակացության, որ ռուսահայոց ազգային հարցի լուծումը հնարավոր է միայն ընդհանուր պետական հարցի լուծման հետ միասին, իբրև ռուսաց պետության կազմակերպության հարցի։ Ուստի, հայ քաղաքական կուսակցությունները, ազգային շահերի ուղիղ ըմբռնողությամբ, պետք է լարեն իրենց ուժերը, որ Ռուսաստանը դրվի հաստատուն իրավակարգի ճանապարհի վրա, այն սկզբունքով, որ հայտարարել է ռուսաց հեղափոխությունը»[51], այսինքն՝ Փետրվարյան հեղափոխությունը։

Ժողովրդականները դեռևս հույս էին կապում «ուժեղ և անբաժան» բուրժուական Ռուսաստանի հետ։ Սակայն, հետագայում, զգալով, որ դա անկարելի է, որոնում են նոր օրիենտացիա և կողմնորոշվում են դեպի Եվրոպա։ «Մենք մեր աչքերը դարձնում ենք ոչ թե դեպի բոլշևիկյան Հյուսիսը,— գրում էին ժողովրդականները,— այլ դեպի քաղաքակիրթ Արևմուտքը։ Մեզ հայերիս համար Արևմուտքից է ծագում գարնան ջերմ ու պայծառ արեգակը»[52]։ Իսկ «Ժողովուրդ» թերթի առաջնորդողը գրում էր. «Հայ ժողովուրդը անսասան կանգնած է դաշնակիցների օրիենտացիայի վրա՝ ելակետ ունենալով իր սեփական կենսական շահերը, վճռական դեմ է խորհրդային կարգերին և խորհրդային Ռուսաստանին»[53]։

Հայաստանի «անկախության» հռչակումից հետո կառավարություն ստեղծելու շուրջը սուր պայքար ծավալվեց հայկական կուսակցությունների, առանձնապես դաշնակցության և ՀԺԿ-ի միջև։ ՀԺԿ-ն հրավիրեց մի ժողով, որտեղ որոշում ընդունվեց կառավարության ստեղծումը չվստահել դաշնակցությանը, որովհետև «տարիների ընթացքում նրա վարած քաղաքականության ու նրա գործելակերպի հետևանքը եղավ հայ ժողովրդի ներկա օրհասական վիճակը»[54]։ ՀԺԿ-ն իրեն էր վերապահում Հայաստանի հանրապետության կառավարություն ստեղծելու իրավունքը, իբրև ավելի խելացի գործելակերպ ունեցող կուսակցության։ Ժողովրդականները փորձում էին համոզել, թե իրենք չունեն իշխանության տենչ, որ կառավարություն կազմելու և ղեկավար դեր խաղալու նրանց պահանջը իբր թելադրվում է հայ ժողովրդի շահերով[55]։ Սակայն, ինչպես ընդգծում էր բոլշևիկյան «Խոսք» շաբաթաթերթը, ՀԺԿ-ի այդ պահանջը պայմանավորված էր ոչ թե ժողովրդի շահերով, այլ միայն կուսակցական նկատառումներով[56]։

ՀԺԿ-ի իշխանատենչ հակումներին տոն էր տալիս նաև «Մշակը»։ Այն պաշտպանում էր ՀԺԿ-ի քաղաքական գիծը և պահանջում հայկական կառավարության ղեկը հանձնել նրան, որպես նոր հոսանքի, որի քաղաքականությունն է իբր համապատասխանում հայ ժողովրդի ցանկություններին[57]։

Դեռևս Թիֆլիսում եղած ժամանակ Ազգային խորհուրդը որոշել էր գնալ Երևան, Հայաստանի կառավարությունը կազմել կոալիցիոն սկզբունքով և ազգային քաղաքականության ղեկը հանձնել դաշնակցության լիդեր Հովհ. Քա-

---

51 ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 222, ց. 1, գ. 5, թ. 31։

52 «Ժողովուրդ», 14. III. 1919։

53 Նույն տեղում. 26. V. 1920։

54 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 12։

55 «Մշակ», 12. VI. 1918։

56 «Զանգ», 5. X. 1918։

57 «Մշակ», 12. VI. 1918։

ցաղնունուն[58]։ ՀԺԿ-ն դեմ էր այդ որոշմանը և միաժամանակ կայացրել էր մի որոշում, որ հայկական կառավարության ղեկավարը չլինի դաշնակցական, նրա ձեռքում չկենտրոնացվեն այնպիսի պաշտոններ, որոնք ազդեն կառավարության քաղաքականության վրա։ Սակայն ժողովրդականների պահանջներն չընդունվեցին, իսկ կոալիցիան չիրականացավ։ Հայաստանի կառավարությունը կազմվեց միայն դաշնակցականներից ու մեկ անկուսակցականից[59]։ Սակայն շատ շուտով այդ կառավարությունը անհաջողության մատնվեց և հրաժարական տվեց։ 1918 թ. նոյեմբերին Հայաստանի հանրապետության երկրորդ կառավարությունը կազմվեց դաշնակցականներից և ժողովրդականներից։ ՀԺԿ-ի ներկայացուցիչները մտնելով Հովհ. Քաջազնունու կազմած կառավարության մեջ, ստանձնեցին ինը մինիստրական տեղերից չորսը[60]։

Թեև կառավարությունը կազմվել էր դաշնակցականներից ու ժողովրդականներից, այնուամենայնիվ, Հայաստանի խորհրդարանում (պառլամենտում) ներկայացված էին հայկական գրեթե բոլոր կուսակցությունները։ Դաշնակցությունը, սակայն, չէր հանդուրժում ժողովրդականների և մյուս կուսակցությունների գոյությունն ու քննադատությունը, կուսակցություններ, որոնք նույնպես հավակնում էին ձեռք բերել հայ ժողովրդի բախտի տնօրինումը։ Որպեսզի ազատվեն այդ կուսակցություններից, դաշնակցականները մայիսի 28-ին հրապարակեցին հայ ժողովրդի երկու հատվածների այսպես կոչված միացման ու անկախության ակտը[61] և այդ պատճառով Հայաստանի խորհրդարանի մեջ մտցրեցին Կովկասում ապաստանած արևմտահայ 12 դաշնակցականների։ Այդ ակտն առաջ բերեց դժգոհություն, կոալիցիոն կառավարության ճգնաժամ, կուսակցական ուժեղ պայքար։ Ակտի դեմ բողոքով հանդես եկան արևմտահայության ներկայացուցիչները, Հայաստանի պառլամենտի ընդդիմադիր կուսակցությունները[62]։ ՀԺԿ-ն խիստ քննադատեց դաշնակցությանը, նրա հրապարակած ակտը համարելով «իրավական, ազգային և պետական տեսակետից ապօրինի քայլ»[63]։ Միաժամանակ արևմտահայ 12 դաշնակցական ներկայացուցիչների հրավիրումը դիտվեց իբրև «պետական հեղաշրջում»[64]։

Հայաստանի խորհրդարանի 1919 թ. հունիսի 4-ի նիստում ՀԺԿ-ի պառլամենտական ֆրակցիան հանդես եկավ մի հայտարարությամբ[65], որով խիստ բողոք էր հայտնում դաշնակցության կողմից հրապարակված ակտի դեմ, բոյկոտ հայտարարում հունիսի 21—23-ի պառլամենտական ընտրություններին, կառավարության կազմից ետ կանչում իր մինիստրներին և պառլամենտական ֆրակցիային՝ դադարելով կառավարող կուսակցություն լինելուց։

Հեռանալով կառավարությունից, ՀԺԿ-ն, սակայն, հավատարիմ մնալով իր բուրժուական էությանը, ակտիվ աջակցություն էր ցույց տալիս դաշնակցական կառավարությանը և մասնակցում Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների դեմ մղված պայքարին։ Դաշինքի մեջ մտնելով բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների հետ, ՀԺԿ-ն եռանդագին աջակցեց դաշնակցական կառավարության հակաժողովրդական քաղաքականության դեմ ուղղված մայիսյան ապստամբության ճնշմանը։ ՀԺԿ-ն քննադատում էր դաշնակցությանը, որ նա թույլ է տվել «փափուկ քաղաքականություն»՝ հնարավորություն տալով մայիսի մեկի տոնը վերածելու «կոմունիստական ագիտացիայի»։ Նա դաշնակցությունից պահանջում էր կառավարության ղեկը

58 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 339, թ. 249։
59 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 3։
60 «Ժողովրդի ձայն», 9. XI. 1918։
61 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 447։
62 «Ժողովուրդ», 11. VI. 1919։
63 «Ժողովրդի ձայն», 11. VI. 1919։
64 Նույն տեղում, 10. VI. 1919։
65 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 2, «Ժողովուրդ», 6. VI. 1919։

տանել «ուժեղ և անշեղ» քաղաքականությամբ[66], մի շարք օրենքներով ու կարգադրություններով անհապաղ վերացնել «հակապետական» բոլշևիկյան կազմակերպությունների գոյությունն ու գործունեությունը Հայաստանում, դա համարելով «միանգամայն անհանդուրժելի հայ ժողովրդի և Հայաստանի կենսական շահերի տեսակետից»[67]։ Ժողովրդական շարժումները կանխելու նպատակով 1920 թ. մայիսի 3-ին հրավիրված արտակարգ նիստում ՀԺԿ-ն ընդունեց մի բանաձև, որտեղ ասված էր՝ «Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող խոշոր վտանգի հանդեպ եռանդուն աջակցություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը՝ պահպանել իրավակարգը երկրում և պաշտպանել Հայաստանի անկախությունը ամեն տեսակ ոտնձգություններից»[68]։ Այդ որոշումն ուղարկվում է ՀԺԿ-ի տեղական բոլոր կոմիտեներին, որոնք նույնպես իրենց աջակցությունն են խոստանում կառավարությանը։ Իր պատրաստակամությունն է հայտնում նաև ՀԺԿ-ի ուսանողական ֆրակցիան, որը նույնպես անհրաժեշտ է գտնում պայքարել «հանցավոր տարրերի դեմ»[69]։ Ժողովրդական շարժումները ճնշելու պատրաստակամության մասին ՀԺԿ-ն իր հավաստիացումներն է հայտնում դաշնակցական կառավարությանը, որի համար Հայաստանի հանրապետության նախագահ Հ. Օհանջանյանը կառավարության անունից հայտնում է իր շնորհակալությունը։ «Ներկայումս իմ կառավարության անունով,— նշում է նա,— հայտնում եմ շնորհակալություն կոմիտեիդ հայրենասեր և ազնիվ ընթացքի համար և հաստատ հավատ ունեմ, որ հայ ժողովրդի միահամուռ ջանքերով մեր պետությունը այս անգամ էլ դուրս կգա ամեն վտանգից անվնաս և ապահով»[70]։ Նույն ոգով ժողովրդականները մասնակցում են մայիսի 13-ին վարչապետի կաբինետում տեղի ունեցած խորհրդակցությանը, որտեղ Հ. Օհանջանյանի՝ Հայաստանում կատարվող դեպքերի մասին զեկուցումից հետո, Գ. Խաչատրյանը ՀԺԿ-ի կողմից կրկին հավաստիացնում է՝ ամեն կերպ աջակցել կառավարությանը[71]։ Դրանք սոսկ խոստումներ չէին, այլ կոնկրետ գործողություն։ Մայիսյան ապստամբության սպառնալիքը ահաբեկել էր ՀԺԿ-ին և այն իր ամբողջ եռանդն ու գործունեությունն ուղղել էր մի բանի՝ օգնել դաշնակցական կառավարությանը ճնշելու երկրի ներսում ծավալվող հեղափոխական շարժումները։

ՀԺԿ-ի հակաժողովրդական պրակտիկ գործունեության մասին են վկայում արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև «Ժողովուրդ» ու «Ժողովրդի ձայն» թերթերում տպագրված նյութերը։ Այսպես, «Ժողովուրդ» թերթը գրում էր, որ «Քարվանսարայի գավառում ժողովրդական կուսակցության անդամները ակտիվորեն մասնակցել են վերջին խռովությունները ճնշելու գործում և ամեն կերպ աջակցել են կառավարությանը՝ պաշտպանելու կարգը»[72]։ Նույն թերթը հայտնում էր, որ «Նոր Բայազետի խռովությունների ժամանակ ՀԺԿ... տրամադրեց քառասուն զինված անդամների և ամեն տեսակ բարոյական աջակցություն ցույց տվեց կառավարությանը»[73]։ ՀԺԿ-ի հակաժողովրդական գործունեությունը հաստատող մի այլ փաստաթուղթ է 1920 թ. «Ժողովուրդ» թերթի № 93-ում տպագրված «ՀԺԿ մասնակցությունը Հայաստանում վերջին հակապետական շարժումը ճնշելու գործում» վերնագրով ամփոփագիրը[74], որտեղ մեծ ոգևորությամբ են շարադրված ժողովրդական շարժումները ճնշելու փաստերը։ Այդ ամփոփագրում ցույց է տրված, որ ՀԺԿ-ի տեղական կոմիտեները

66 «Ժողովուրդ», 23. V. 1920։

67 Նույն տեղում, 17. V. 1920։

68 Նույն տեղում, 7. V. 1920։

69 Նույն տեղում, 26. V. 1920։

70 Նույն տեղում, 13. V. 1920։

71 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 634։

72 «Ժողովուրդ», 1. VI. 1920։

73 Նույն տեղում։

74 Ամփոփագիրը շարունակվում է նույն թերթի մի շարք այլ համարներում։

ամեն օր 20—30 մարդուց բաղկացած զինված խմբեր են տրամադրել կառավարությանը, հատկապես Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նոր Բայազետի ապստամբությունները ճնշելու գործում։ Այդ նույն ամփոփագրում ասվում է, որ «ՀԺԿ հրահանգը իր գավառական կոմիտեներին՝ աջակցել իշխանությանը ամեն միջոցներով ճնշելու հակապետական կործանարար շարժումն ամեն տեղ, ուր կարտահայտվի այն, անկախ և միացյալ Հայաստանի դեմ, ունեցել է բարերար ազդեցություն և տվել է դրական հետևանքներ»[75]։ Եվ այդ «բարերար ազդեցության» ու «դրական հետևանքների», այսինքն՝ ժողովրդական շարժումները ճնշելու համար էլ թերթի խմբագրությունը շնորհակալություն էր հայտնում ՀԺԿ-ի կոմիտեներին ու անդամներին[76]։ Երբ ապստամբությունը պարտություն էր կրել և խեղդվել արյան մեջ, ՀԺԿ-ն կառավարությունից պահանջեց պատժի ենթարկել նրա ղեկավարներին ու մասնակիցներին։ «Մենք պահանջում ենք,— գրում էին ժողովրդականները,— որ այդ շարժման պարագլուխները ենթարկվեն խիստ պատժի։ Թող ոչ ոք չկարծի, որ կարելի է Հայաստանի անկախ գոյությունը... և մեր անվերապահ համակրական վերաբերմունքը դեպի մեծ դաշնակիցները, անպատիժ կերպով վտանգի ենթարկել»[77]։ Եվ պատահական չէ, որ ժողովրդականները հայտարարում էին՝ «Մենք միշտ հավասարապես բացասական վերաբերմունք ունենք դեպի բոլշևիկները, ինչ պիտակի տակ էլ հանդես գան»[78]։

ՀԺԿ-ն մասնակցեց նաև փետրվարյան խռովությանը։ Այն ժամանակ, երբ նորաստեղծ հեղափոխական իշխանությունը մեծ ջանքեր էր գործադրում լուծելու քաղաքական, տնտեսական և կուլտուրական բարդ խնդիրներ, հակահեղափոխական կուսակցությունները, այդ թվում և ՀԺԿ-ն, միասնական ճակատ ստեղծեցին Հայաստանի հեղափոխական իշխանության դեմ։ 1921 թ. փետրվարի 25-ին Երևանում հակահեղափոխական կուսակցությունների խորհրդակցություն հրավիրելու նախաձեռնողներից մեկը ՀԺԿ-ն էր։ Խորհրդակցությունում քննարկվում է Հայաստանում խռովություն կազմակերպելու և իրականացնելու հարցը[79]։ Ավելի ակտիվ և միասնաբար գործելու նպատակով, հակահեղափոխական կուսակցությունների երկուական ներկայացուցիչներ կազմում են միջկուսակցական խորհուրդ, որի փոխնախագահ է ընտրվում ՀԺԿ-ի անդամ Կ. Գյուլնազարյանը[80]։ Միջկուսակցական խորհրդի նպատակն էր Հայաստանի «Փրկության կոմիտեին» օգնել վերականգնելու շահագործողական կարգը երկրում։ Այդ խորհուրդը բաղկացած էր երկու սեկցիայից[81]. առաջին սեկցիան պետք է խռովարարների համար պարեն հայթայթեր, իսկ երկրորդը՝ զբաղվեր պրոպագանդայով։ Այն կազմակերպում է զինված խմբեր, նյութական միջոցներ է հայթայթում՝ կազմակերպելով հանգանակություններ։ «Ամբողջ պատերազմի ընթացքում,— նշել է Ա. Հակոբյանը,— այդ միջկուսակցական օրգանը հավատարիմ կերպով ծառայելով «Հայաստանի Փրկության կոմիտեին», նրա հետ միասին պատճառ է դառնում հարյուրավոր աշխատավորների սպանությունների ու սովամահության»[82]։

Փետրվարյան խռովության ճնշումից հետո ՀԺԿ-ն ինքնալուծարքի ենթարկվեց. նրա մի մասը՝ ձախերը, ընդունեցին սովետական կարգերը և մասնակցեցին սոցիալիստական շինարարությանը, իսկ աջերը ճողոպրեցին արտասահման։

---

75 «Ժողովուրդ», 11. VI. 1920։

76 Նույն տեղում։

77 Նույն տեղում, 15. V. 1920։

78 Նույն տեղում։

79 ՄԱԻ ՀՄԿԱ, ֆ. 4042, ց. 1, գ. 6։

80 Նույն տեղում։

81 Նույն տեղում։

82 Ա. Հակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին, Երևան, 1948, էջ 71։

Այսպիսով, «Հայ ժողովրդական կուսակցության» գաղափարախոսության և պրակտիկ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1917 թ. քաղաքական ասպարեզ իջած տիպիկ բուրժուական այդ կուսակցությունը. հավատարիմ իր դասակարգային էությանը, 1917—1921 թթ. դաշնակցականների հետ միասին բոլոր ուժերով պայքարել է Հայաստանի բանվորագյուղացիական զանգվածների հեղափոխական շարժումների և Հայաստանում սովետական կարգերի հաստատման դեմ։

АНТИНАРОДНАЯ СУЩНОСТЬ ИДЕОЛОГИИ И ПРАКТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ «АРМЯНСКОЙ НАРОДНОЙ ПАРТИИ»

ДАВИД ХЕЧУМЯН

Резюме

После Февральской революции в Закавказье, в том числе и в Армении, социально-экономические и политические условия привели к созданию в Тифлисе «Армянской народной партии» (АНП) (11 апреля 1917 г.). АНП имела свою программу, устав, печать, вела борьбу за завоевание власти в Армении. В ноябре 1918 г. АНП вместе с дашнаками организовала коалиционное правительство. Выражая интересы армянской либеральной буржуазии, АНП стремилась ликвидировать феодальные отношения и вести страну по капиталистическому пути развития, создать «великую и неделимую» Армению, установить буржуазную парламентарную республику, в то же время взяв на себя руководство армянской политической жизнью. Она принимала активное участие в борьбе с революционным движением в Армении. В союзе с буржуазными и мелкобуржуазными партиями она участвовала в подавлении майского восстания, направленного против антинародной политики дашнакского правительства. После установления Советской власти в Армении АНП приняла участие в февральском мятеже, выразив тем самым свою антинародную, контрреволюционную сущность. После подавления февральской авантюры АНП была распущена. Идеология и политика этой партии потерпели крах.